

ԿԱԶՄՎԱԾ Է 20 ՕԳՈՍՏՈՍԻ 2022Թ.


ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 2 ՕՐԻՆԱԿԻՑ  
Օրինակ 1

Հաստատված է

Գրանցված է

<<ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ>>  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ  
20 օգոստոսի 2022թ.  
Հիմնադիր համագումարի կողմից

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ  
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ  
Գրանցման համար 211.172.1288914  
Հարկ վճարողի հաշվառման համար  
00514617

 Կուսակցության Վարչության Նախագահ  
Տիգրան Արզարանցյան  
/ստորագրություն/ /անուն ազգանուն/

<< 17 >> հունվարի 20 23Թ.

Աշխատակից  
 



ԾՐԱԳԻՐ

<<ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2022

## «ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

### ԾՐԱԳԻՐ

«Ուժը Հայրենյաց» կուսակցության հիմնական նպատակները Հայաստանը և Արցախը միասնական, հզոր և պետականության համար անհրաժեշտ զարգացման բոլոր ոլորտները կայուն տեսնելն է:

### «ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ» Կուսակցության ծրագրային հիմնական դրույթները. Բովանդակություն

1. Հիմնական դրույթներ,
2. Ազգային անվտանգություն, ռազմաարդյունաբերություն և պաշտպանություն,
3. Արտաքին քաղաքականություն,
4. Իրավունքի և օրենքի գերակայություն /հանցավորության դեմ պայքար, Անկախ դատական համակարգի կատարելագործում/,
5. Արդյունավետ վարչարարություն /տեղական ինքնակառավարում և տարածքային կառավարում/,
6. Կոռուպցիայի դեմ պայքար,
7. Հասարակական և քաղաքական կազմակերպությունների զարգացում,
8. Տնտեսական քաղաքականություն /բյուջետային քաղաքականություն, ներդրումային քաղաքականություն/,
9. Կրթության և գիտության ոլորտների քաղաքականություն,
10. Մշակույթ,
11. Ազատամարտիկների և իրենց ընտանիքների անդամների իրավական և այլ բազմակողմանի աջակցություն: Սոցիալական քաղաքականություն, զբաղվածություն և սոցիալական պաշտպանություն /ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանություն/
12. Առողջապահություն
13. Տրանսպորտ և քաղաքաշինություն
14. Շրջակա միջավայրի պաշտպանություն
15. Զբոսաշրջություն
16. Ժողովրդավարական ինստիտուտների կայացում
17. Տեղեկատվական անվտանգություն
18. Առաջատար տեխնոլոգիաներ /ռոբոտաշինություն/
19. Սպորտ:
20. Միյուռքի և եկեղեցու հետ կապերի ամրապնդում

### Հիմնական դրույթներ.

1. «ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ» Կուսակցությունը ստեղծվել է իրավական պետության ստեղծման, ազգային արժեքների պահպանման, ՀՀ քաղաքացու կյանքի որակի բարձրացման, տնտեսական կայուն զարգացման, հայոց սահմանների ամրապնդման ու



անվտանգության ապահովման և արտաքին քաղաքականության նպատակային իրականացումն ապահովելու նպատակով:

2. «ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ» Կուսակցությունը կարևորում է բոլոր բնագավառների զարգացման և դրանց ուղղված աշխատանքների համակարգման անհրաժեշտությունը: Կուսակցությունը ձգտելու է հասնել այդ աշխատանքների արդյունավետ իրականացմանը: Կուսակցությունը պարտավորվում է ստանձնել ՀՀ քաղաքացիների համար պետական լավագույն սպասարկում, ՀՀ քաղաքացիների ազատ, անվտանգ և բարեկեցիկ կյանքի ապահովման համար:

3. «ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ» Կուսակցությունը իր շահերից բարձր է դասում ազգային ավանդական արժեքները: Աջակցում է Հայաստանի և Արցախի միասնական, հզոր և պետականության համար անհրաժեշտ զարգացման բոլոր ոլորտների կայունության համար:

4. «ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ» Կուսակցությունն իր ամբողջ ներուժը ներդնելու է Հայաստանի Հանրապետությունը ռազմարդյունաբերական ուժեղ երկրի վերածելու համար, քանի որ գտնում է, որ սեփական բանակը պետք է ապահովված լինի միայն վերջին սերնդի արտադրության որակյալ զինատեսակներով, ռազմարդյունաբերության արտադրությունը կազմակերպվի Հայաստանի Հանրապետությունում:

5. ՀՀ գործող բոլոր հասարակական, քաղաքական ուժերի, անհատների հետ «ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ» Կուսակցությունն իր հարաբերությունները կառուցում է ազգային և պետական շահերի առաջնայնության սկզբունքով, որոնք բարձր է դասում անձնական և հատվածական շահերից: Միևնույն ժամանակ «ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ» Կուսակցությունը իր շահերից բարձր է դասում ազգային ավանդական արժեքները, որոնք ենթակա չեն փոփոխման որևէ ուժի շահերից ելնելով:

6. «ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ» Կուսակցության հիմնական նպատակներից մեկը Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության, մարդու և քաղաքացու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության և ժողովրդավարական ինստիտուտների վրա հիմնված իրավական պետության կառուցումն է:

7. «ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ» Կուսակցության գնահատմամբ, Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության ոլորտում պետության գործունեությունը պետք է ուղղված լինի հարևան երկրների հետ դիվանագիտական, կայուն և փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ու պահպանմանը, միջազգային հանրությանը բնականոն ինտեգրմանը, նրանում Հայաստանի դերի մեծացմանը, աշխարհի մյուս երկրների հետ փոխշահավետ քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ կապերի կայուն զարգացմանը:

8. Հայաստանի Հանրապետության զարգացման համար առանցքային կարևորություն ունի արդյունավետ տնտեսական համակարգի առկայությունը, որի ստեղծմանն ու զարգացմանն է ուղղված լինելու «ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ» Կուսակցության գործունեությունը:

Նշվածին, ըստ մեզ, կարելի է հասնել միայն հետևողական, կայուն, կանխատեսելի և հասարակության բոլոր շերտերի օրինական շահերի հաշվեկշռվածությունն ապահովող տնտեսական քաղաքականության իրականացման ճանապարհով:

9. «ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ» Կուսակցությունը Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման երկարաժամկետ հատվածում, ոլորտի լավագույն



մասնագետների աջակցությամբ, ստեղծելու է տնտեսական աճի կայուն բանաձև, որի շնորհիվ նոր շունչ կհաղորդվի Հայաստանի տնտեսությանը՝ խթանելով դրա առանցքային բոլոր բնագավառների զարգացումը /արտադրություն, արտահանում, օտարերկրյա ներդրույի ծրագրերի ներգրավվում և այլն/:

10. «ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ» Կուսակցությունը բարձր է գնահատում կրթության դերը Հայաստանի Հանրապետության զարգացման գործում: Կուսակցությունը ստանձնելու է ոլորտում կոռուպցիայի բացառում, ոլորտի մասնագետների բաձրակարգ վերապատրաստում, զարգացած երկրների փորձի կիրառում՝ երկրում ամբողջովին նոր և որակյալ կրթական ծրագրերի իրականացմամբ:

11. «ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ» Կուսակցությունը Հայաստանի Հանրապետության զարգացման գործընթացում կարևորում է գիտության ու մշակույթի դերը: Մենք կարծում ենք, որ մշակույթի պահպանման ուղղված միջոցառումներն ու մշակութային աջակցության ծրագրերն պետք է իրականացվեն հիմնվելով մեր երկրի համար աշխարհում ապահովվելով առաջնային դիրք: Մշակույթը, կրթությունը, առողջապահությունը, սպորտը և գիտությունը պետք է լինեն պետական հոգածության հիմնական առարկա:



## Ծրագիր

### • Ազգային Անվտանգություն, ռազմարդյունաբերություն և պաշպանություն.

Ազգային անվտանգությունը ցանկացած երկրի ինքնիշխանության, տարածքային անբողջականության պահպանման և կայուն զարգացման ապահովման համար ունի կենսական նշանակություն: Ազգային անվտանգության ապահովման գործընթացը բավական բարդ է և փոխկապակցված մի շարք համակարգային խնդիրների արդիականացման հետ, որոնց հաջող լուծումը միայն կարող է բավարար չափով ապահովել ազգային անվտանգությունը: Վերջին տարիների աշխարհաքաղաքական զարգացումները, միջազգային և տարածաշրջանային իրադրության փոփոխությունները, անվտանգության և ռազմաքաղաքական ծավալվող փոփոխությունները անհրաժեշտություն են առաջացնում վերանայելու Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության, պաշպանության և արտաքին քաղաքական հիմնական ուղղությունները, սպառնալիքներն ու առաջնայնությունները:

Ազգային անվտանգության հիմնախնդիրներն են՝

1. Երկրի պաշպանության ուժեղացումը, ազգային անվտանգության ներքին և արտաքին սպառնալիքների կանխատեսումը և չեզոքացումը
2. Այլ պետությունների հետ, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ փոխգործակցությունը,
3. Տարածաշրջանում բնակվող ազգերի և ժողովուրդների, ինչպես նաև պետությունների կենսական շահերի նկատմամբ սպառնալիքի բացակայությունը,
4. Պետական անվտանգության՝ տարածքի, ազգաբնակչության և կառավարման համակարգի նկատմամբ սպառնալիքի ու վտանգի բացակայության ապահովումը,
5. Տեղեկատվական անվտանգության՝ տեղեկատվական տարածքի պաշպանվածության, տեղեկատվության կիրառում միայն վերջինիս հասցեատերերի կողմից և միայն նպատակային կերպով, տեղեկատվության գաղտնիության, ամբողջության և հասանելիության պաշպանվածության, ռազմական, քաղաքական տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական և տեղեկատվական ու հեռահաղորդակցման կառավարման համակարգերի պաշպանության ապահովումը:

### Ռազմարդյունաբերություն

Պետության անվտանգության ապահովման, ռազմատեխնիկական արդիականացման, ռազմամթերքների նոր տեսակների մշակման, ռազմատնտեսական զարգացման համար կարևոր է ռազմարդյունաբերական արտադրությունը: Մրցունակության հիմնասյունը նորորարություններ են, որոնց կիրառման համար անհրաժեշտ է հետազոտական աշխատանքներ կատարել և հենվել մարդկային բարձրորակ կապիտալի վրա:

Նախատեսում ենք ՀՀ-ի ռազմականացում, զինված ուժերի արդիականացում, որի համար՝

1. Ոլորտի որակավորված մասնագետների պատրաստում, վերապատրաստում,
2. Ժամանակակից գորատեսակներ արտադրություն,
3. Օդային պաշպանության սարքերի արտադրություն,



4. Այլ պետությունների հետ ռազմատեխնիկական համագործակցության ծրագրերի իրականացում:

Մեր պետության սահմանների անվտանգության, պաշտպանության երաշխավորը արհեստավարժ բանակն է: Ռազմական անվտանգությունը ենթադրում է տարածրջանում խաղաղության պահպանում, սահմանների անվտանգություն: Բանակաշինության նորովի կազմակերպում,

Ռազմական անվտանգության խնդիրներն են՝

1. Բանակի գերժամանակակից տեխնիկական չհագեցվածությունը,
2. Ռազմակրթական ոլորտի բարեփոխման ծրագրերի սակավությունը,
3. Հասարակական վերահսկողության սահմանափակվածությունը,
4. Ջինձառայողների ցածր իրավագիտակցության մակարդակը,
5. Ջինձառայողների բարոյահոգեբանական վատ մթնոլորտը,
6. Ջինձառայողներին տրվող ամենամսյա դրամական ցածր վճարները,
7. Մառայության համար համապատասխան պայմանների բացակայությունը,
8. Պատերազմական գործողություններին մասնակցած զինձառայողներին տրամադրվող սոցիալական երաշխիքների ոչ ամբողջականությունը:

\* Արտաքին քաղաքականություն.

Հայաստանի Հանրապետության արդյունավետ արտաքին քաղաքականությունն ապահովում է երկրի արտաքին անվտանգությունը, պետության զարգացման արտաքին բարենպաստ պայմանների երաշխավորումը, գործընկեր երկրների հետ ստեղծված հարաբերությունների զարգացումը, միջազգային հարաբերություններում Հայաստանի դիրքորոշումների ներկայացումը, միջազգային կազմակերպություններում և ծրագրերում ներգրավվածության խորացումը, տարածաշրջանային խնդիրների կարգավորումն ու համագործակցային մթնոլորտի ձևավորումը:

ՀՀ արտաքին քաղաքականության մեջ հիմնական նպատակներն են՝

1. Միջազգային հանրության կողմից Հայաստանի դիրքորոշումների ընկալումն:
2. Արտաքին քաղաքականության հիմնական խնդիրներից է Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացմամբ արցախյան հիմնախնդրի լուծումը,
3. Արցախի անվտանգության միջազգային երաշխավորումը,
4. Հարևան պետությունների հետ հարաբերությունների խորացումը և համագործակցությունների զարգացումը:

\* Իրավունքի և Օրենքի գերակայություն.

«Ուժը Հայրենյաց» կուսակցությունը կարևորում է քաղաքացու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Կուսակցությունը պարտավորվում է իր ջանքերը ամբողջովին գործադրել իրավական պետության կայացման համար՝ հիմնվելով ժողովրդավարական ինստիտուտների վրա:

Այս համատեքստում կուսակցությունը կարևորում է պետության բարձրագույն մարմինների փոխադարձ վերահսկողությունը և փոխգործակցությունը՝ տարանջատման և հակակշռման սկզբունքների հիման վրա: Կուսակցությունը նախատեսում է սահմանադրական բարեփոխումների իրականացմամբ ստեղծել կանոնակարգված



փոխհարաբերությունների հաստատում իշխանության 3 ճյուղերի միջև նրանց անկախության սկզբունքի հիման վրա:

Հիմնվելով քաղաքացիական համաձայնության վրա հասարակական-քաղաքական կայուն հարաբերությունների ձևավորման նպատակով, մասնավորապես, կարևորում ենք

1. Ընտրական համակարգում հասնել արդար և թափանցիկ ընտրությունների կազմակերպմանն ու անցկացմանը,

2. Դիտորդական, հասարակական և միջազգային կազմակերպությունների գործունեության ազատության պահպանումը,

3. Զանգվածային լրատվական միջոցների ազատ և անխոչընդոտ մասնակցությունը ընտրական գործըթացներին,

4. Օժանդակել ընտրական հանձնաժողովների աշխատանքների թափանցիկությանը,

5. Աջակցել քաղաքացիների կողմից իրականացվող հավաքների, երթերի, ցույցերի ազատ անցկացման իրավունքի պահպանմանը:

\* Հանցավորության դեմ պայքար.

Երկրի ներքին անվտանգության համար անհրաժեշտ է պայքարել հանցագործությունների դեմ, կանխարգելել դրանք, որպեսզի ՀՀ-ում բնակվող յուրաքանչյուր անձ իրեն անվտանգ և ապահով զգա:

Այս կոնտեքստում անհրաժեշտ ենիք համարում՝

1. Իրավապահ մարմինների միջև համագործակցության,

2. Պետության և ոչ պետական, հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն կանխարգելիչ ծրագրերի մշակման և իրականացման առումով,

3. Անդրազգային հանցագործությունների դեպքում միջազգային համագործակցություն,

4. Հասարակական իրավազիտակցության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացում,

5. կրթադաստիարակչական, տեղեկատվական ինստիտուտների զարգացում:

Անկախ դատական համակարգի կատարելագործում

Դատական համակարգը պետք է գործի հիմնվելով անկախության, արդարադատության, հավասարության, հրապարակայնության, ողջամիտ ժամկետներում գործերի քննության սկզբունքների հիման վրա:

Դատավորի անկախության և անկողմնակալության երաշխավորման նպատակով անհրաժեշտ է ստեղծել դատավորի անձեռնմխելիության ու անփոփոխելիության իրավական, սոցիալական և անհրաժեշտ այլ հիմքեր՝ դրանք հավասարակշռելով պատասխանատվության ապահովման գործուն մեխանիզմներով:

\* Արդյունավետ վարչարարություն.

Պետական կառավարման կատարելագործմանն ուղղված բարեփոխումներում կուսակցությունը պարտավորվում է



1. Սահմանել որոշումների ընդունման կարգը, ժամկետները՝ քաղաքացիների և պետության օրնական շահերի հիման վրա,
2. Հասարակական վերահսկողության վրա հիմնվելով բարձրացնել պետական մարմինների գործունեության թափանցիկության մակարդակը,
3. Պետական մարմինների կողմից նույնաբնույթ գործառնությունների բացառում:

#### Տեղական ինքնակառավարում

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի սկզբունքների վրա հիմնվելով և որպես ռազմավարական նպատակ դիտարկելով Հայաստանում տնտեսապես ուժեղ տեղական ինքնակառավարման կայացումը, «ՈւՇԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ» կուսակցությունն կարևորում է

1. հստակեցնել տեղական ինքնակառավարման սահմանադրական երաշխիքները, համակարգել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները և լիազորությունները,
2. բարձրացնել տեղական ընտրությունների նշանակությունը և տեղական ինքնակառավարման մարմիններում ապահովել ժողովրդավարական ներկայացուցչություն,
3. սահմանել վարչական շրջանների բյուջետային եկամուտների մեծացման առավել ընդլայնված հնարավորությունները և համայնքների կայուն զարգացման նպատակով ներդնել ֆինանսական նոր մեխանիզմներ,
4. վերանայել գույքահարկի ու հողի հարկի հաշվարկման և գանձման մեխանիզմները՝ ապահովելով այդ հարկատեսակների մուտքերի զգալի ավելացում,
5. ուժեղացնել և կատարելագործել պետության և բնակչության կողմից տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողությունը:

#### Տարածքային կառավարում

Տարածքային զարգացման համար հետևյալ նպատակներն ենք սահմանել.

1. Վարչատարածքային բաժանման կամ համայնքների խոշորացման առավել արդյունավետ հայեցակարգի մշակում, վարչատարածքային միավորների բաժանման նոր համակարգերի ձևավորում,
2. Տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների հստակեցում՝ բացառելով մենաշնորհը
3. Պետական կառավարման ինստիտուտների ապակենտրոնացում,
4. Սահմանափակ շրջանների համայնքների զարգացմանն ուղղված արտոնությունների սահմանում,
5. վարչատարածքային միավորների սոցիալական և տնտեսական կայուն զարգացում:

#### \* Կոռուպցիայի դեմ պայքար.

Անհրաժեշտ ենք համարում բարձրացնել պետական համակարգում ծառայողների և իրավապահ մարմինների դերը կոռուպցիայի դեմ պայքարում և համոզված ենք, որ մեր որդեգրած քաղաքականությունը պետք է հիմնված լինի օրենքի գերակայության վրա:



Այս համատեքստում անհրաժեշտ ենք համարում իրականացնել՝

1. Բարձրացնել պետական վարչարարության թափանցիկությունն ու արդյունավետությունը,

2. Իրականացնել կոռուպցիայի դեմ պայքարի օրենսդրական և իրավական վերլուծություն, նոր հայեցակարգերի և օրենսդրական դաշտի բարեփոխմանն ուղղված նախաձեռնություններ, ներկայացնել, մշակել և ընդունել օրենսդրական փաթեթներ:

3. Պահպանել պաշտոնատար անձանց և պետական ծառայողների կողմից կամայական որոշումներ ընդունելու արգելքը, և որ այդ անձինք կատարեն միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենքով,

4. Մշակել ծրագիր, որն ուղղված կլինի պայքարելու կաշառակերության, թրաֆիքինգի, դրամանենգության և այլ արատավոր երևույթների դեմ:

5. Հիմնվելով օրենքի գերակայության, անկողմնակալության, արդարացի պատժի, պատասխանատվության անխուսափելիության, իրավապահ և դատական մարմինների գործունեության հրապարակայնության և թափանցիկության սկզբունքների վրա հնարավոր կլինի հասնել կոռուպցիայի բացակայության:

\* Հասարակական և քաղաքական կազմակերպությունների զարգացում.

Հասարակական և քաղաքական կազմակերպությունների զարգացումը և դրան ուղղված պետական աջակցությունը, կլուծի այնպիսի կարևորագույն խնդիրներ, ինչպիսիք են՝ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման գործընթացներին քաղաքացիների մասնակցության հնարավորությունների ընդլայնումը, քաղաքացիական վերահսկողության էական ուժեղացումը: Տարբեր հարցերի շուրջ իշխանության և հասարակության միջև երկխոսության ձևով կապը, հասարակական համաձայնության ձեռքբերման հնարավորությունների մեծացումը կնպաստեն հասարակության մասնակցային գործընթացի խթանմանը,

Պետության սոցիալական գործառույթների իրականացման համատեքստում ակտիվ համագործակցությունը հասարակական կազմակերպությունների հետ կնպաստի ոչ միայն հասարակական կազմակերպությունների և պետության միջև ամուր կապին, արդյունավետ փոխգործակցությանը, այլ նաև սոցիալական ծրագրերի իրականացման կատարելագործմանը:

Այս խնդիրների լուծման համար անհրաժեշտ է՝

1. Հասարակական կազմակերպությունների մասնակցության հնարավորությունները պետական որոշումների մշակման գործընթացում ընդլայնել, մասնագիտացված հասարակական կազմակերպություններին ներգրավել սոցիալական և տնտեսական ծրագրերի մշակման գործընթացներին, ինչպես նաև նպաստել ծնողագուրկ երեխաների, տարեցների, հաշմանդամների, փախստականների հիմնախնդիրների լուծմանը,

2. ապահովել պետական բյուջեով նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացմանը ներգրավել հասարակական կազմակերպություններին:

\* Տնտեսական քաղաքականություն.

«ՌԻԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ» Կուսակցությունը տնտեսական զարգացման կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի իրականացման համատեքստում կարևորում է՝



1. Հարկային արտոնությունների տրամադրումը, հատկապես այն տնտեսվարողներին, որոնց գործունեությունը հարկվում է ավելացված արժեքի հարկով և շահութահարկի գծով որոշակի արձակուրդների տրամադրում,

2. Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը զարգացնող միջոցառումների իրականացում: Վերանայել փոքր ու միջին բիզնեսին պետական աջակցության մեխանիզմը,

3. Ֆինանսավորման կամ վարկավորման արտոնություններ տրամադրել շեշտը դնելով նորամուծող և տեխնոլոգիական ընկերությունների աջակցմանը,

4. Մտավոր սեփականության պետական ֆինանսավորմամբ ստեղծված օբյեկտների արտոնագրման ընթացակարգերը առավել մատչելի դարձնել, ներդրումային ծրագրերի օժանդակության ծրագրեր իրականացնել, օբյեկտների առևտրականացման ու առաջխաղացման հարցում,

5. Զարգացնել պետության և մասնավոր հատվածի համագործակցությունը ֆինանսական աջակցության տեսանկյունից,

6. Մեծացնել գիտությանը՝ գիտական հետազոտություններին տրամադրվող ծախսերը ՀՆԱ-ում,

7. Զեկվորել արտադրական հարաբերություններ հիմնվելով արտադրության ու մրցակցության վրա,

8. Արտաքին տնտեսական գործունեության բարելավում և արտաքին պարտքի արդյունավետ կառավարումը, նվազեցումը,

9. Գործարարության զարգացման նպատակով ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորումը և երկրի ներդրումային ոլորտում մակարդակի բարձրացումը,

10. Ենթակառուցվածքների զարգացում,

11. Ձեռնարկատիրական գործունեության շահութաբերության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում,

12. արտադրական ենթակառուցվածքների համալիրի բարեփոխումների իրականացումը:

Բյուջետային քաղաքականության ոլորտում սահմանել ենք ոլորտի հիմնական նպատակները՝

1. Կայուն գներ,

2. Վարկային և ֆինանսական շուկաների զարգացում, վարկավորման տոկոսների նվազեցում,

3. Գնաճի կառավարում, սահմանափակում:

Վերը նշված նպատակներին հասնելու համար սահմանել ենք հետևյալ գործունեության ուղիները՝

1. Գնաճի կառավարման ճկունություն,

2. Ֆինանսավարկային քաղաքականության մշակում,

3. Ոչ կանխիկ դրամաշրջանառության զրգացում, ընդլայնում,

4. Վարկային դրույքաչափերի նվազեցում,

5. Վարկային ռեսուրսների մատչելիության սահմանում,

6. Բնակչության կողմից ավանդների ներդրման գործընթացի խթանում,



7. Բնակչության ավանդների անվտանգության երաշխիքների կատարելագործում,
8. Արժույթային կարգավորմանն ուղղված ծրագրերի իրականացում,
9. Վճարահաշվարկային հարաբերություններում բարեփոխումներ,
10. Ոլորտի օրենսդրական դաշտի բարեփոխումներ,
11. Արժեթղթերի շուկայի զարգացում և կայացում,
12. Արժեթղթերի շուկայի մասնակիցների շահերի պաշտպանության ապահովումը,
13. Արժեթղթերի շուկայի արհեստավարժ մասնակիցների միջև մրցակցության մեծացում,
14. Արժեթղթեր թողարկողների գործունեության թափանցիկության մակարդակի բարձրացումը, Արտաքին պարտքի կառավարման ճկուն համակարգի ստեղծում,
15. Արտաքին փոխառությունների ներգրավման և օգտագործման նկատմամբ վերահսկողության մեխանիզմի համակարգում և կատարելագործում,
16. Համաշխարհային ֆինանսական կառույցների, պետությունների հետ ՀՀ-ի ինտեգրումը,
17. Կիրառելի զարգացած երկրների փորձը արտաքին պարտքի կառավարման նոր մեխանիզմների ներդրումը,
18. Արտաքին պարտքի նվազմանն ուղղված տնտեսական քաղաքականության մշակում:
19. Շուկայի մասնակիցների ինքնակարգավորիչ մեխանիզմների ակտիվացումը:

Ներդրումային քաղաքականություն.

Հետպատերազմյան ժամանակաշրջանում և ներքին քաղաքական անկայունության հետևանքով ներդրումների առկա ծավալները բավարար չեն Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման համար:

Տնտեսական ակտիվության բարձրացման համար, ներդրումների խթանման համար անհրաժեշտ է

1. Գործարար բարենպաստ միջավայրի ձևավորում,
2. Օտարերկրյա ներդրումների վերաբերյալ համապարփակ ներդրումային ռազմավարության մշակում,
3. Ներդրողների պաշտպանության երաշխիքների կատարելագործում
4. Ներդրումների ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի կատարելագործում՝ միջազգային տնտեսության նոր իրողություններին համապատասխան, արտարժույթի փոխարկելիությանն ու փոխանցումներին առնչվող դրույթների կատարելագործում.
5. Նորարարությունների ներդրմանը, դրանց կատարելագործմանն ուղղված ծրագրերի օժանդակում,
6. Օրենսդրության թափանցիկության բարձրացում,
7. Պայմանագրերի կատարման տևական գործընթացների վերափոխում՝ արագ և մատչելի գործընթացների սահմանմամբ,



8. Հիմնվել երկրի մրցակցային առավելությունների բացահայտմանն ու ամրապնդմանը,

9. Ազատ տնտեսական գոտիների ստեղծում և դրանցում նոր շահագործողների ներգրավում,

10. Արտոնությունների տրամադրում մեծ ծավալ ունեցող ներդրումների, տնտեսության զարգացման համար մեծ կշիռ ունեցող, գերակա ոլորտներում,

11. Անհարկի և ծախսատար ստուգումների բացառում,

12. Պետական ներդրումային ծրագրերի իրականացում,

13. Ներդրումներին նպաստող հարկային քաղաքականություն,

14. Պետություն և մասնավոր հատված գործընկերության, համագործակցության զարգացում:

15. Ներդրումները խթանող ենթակառուցվածքների զարգացում և կայացում:

### Կրթության, գիտության և սպորտի ոլորտների քաղաքականություն

#### Կրթություն

Կրթությունը կարևոր է երկրի կայուն զարգացման, մարդկային կապիտալի պահպանման և վերարտադրման համար: Կրթությունը անհրաժեշտ է զարգացնել կրթության որակի, արդյունավետության և մատչելիության բարձրացման միջոցով: Կրթությունը պետական ռազմավարական հիմնախնդիրների լուծման գործոններից մեկն է:

Մեր նպատակներն են

1. Սահմանադրորեն ամրագրել միջնակարգ կրթության՝ որպես քաղաքացու պարտականություն,

2. Որակյալ կրթության հասանելիության և մատչելիության հավասարակշռվածությունը,

3. Գիտակրթական համակարգի արդյունավետության մակարդակի բարձրացում,

4. Մանկավարժների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատանքի վարձատրության բարձացումը,

5. Արդի պահանջները բավարարող մանկավարժական կազմի ձևավորումը,

6. Հանրակրթական դպրոցներում մասնագիտական կողմնորոշմանը միտված կրթության նոր մեխանիզմների ներդրումը,

7. Կրթական մասնագիտությունների ցանկի եւ կրթության որակի մակարդակի համապատասխանեցումը շուկայական տնտեսության ժամանակակից պահանջներին,

8. Կրթաթոշակների բարձրացումը,

9. Հաշմանդամ եւ անապահով ընտանիքների երեխաների կրթական ծախսերի հատուցումը,

10. Բոլոր մակարդակներում կոռուպցիայի դեմ պայքարը:

#### Գիտություն

Հայաստանում գիտության զարգացումը տնտեսության զարգացման, աղքատության հաղթահարման, նոր աշխատատեղերի ստեղծման, ազգային անվտանգության



ամրապնդման, երկրի մրցունակության և միջազգային հեղինակության բարձրացման երաշխիք:

1. գիտական բարեփոխումների ռազմավարական հայեցակարգի մշակում
2. Գիտության, գիտատար արտադրությանը սպասարկող ճյուղերի զարգացումը, կրթական համակարգի համապատասխանեցումը ժամանակակից պահանջներին, մշակութային ազգային ժառանգության պահպանումն ու զարգացումը,
3. Գիտական ենթակառուցվածքների գործունեության նկատմամբ պետական աջակցությունը,
4. պետական աջակցությամբ հիմնարար և կիրառական գիտությունների զարգացումը
5. Կարելորագույն միջազգային և ազգային գիտական մշակումների, ծրագրերի, կառավարման համակարգի կատարելագործումն ու վարչարարական անհարկի միջամտությունների վերացումը,
6. Գիտնականների բարձր վարձատրություն,
7. Տնտեսության մեջ գիտական ու կրթական համակարգերի ներդրման տարանջատվածության վերացումը:

#### Մշակույթ

Մշակույթը ոչ միայն մեր ազգապահպանության, այլև քաղաքակրթության երաշխիքն է: Մենք կարևորում ենք մշակույթի պահպանումը և զարգացումը:

Ոլորտի կարևորագույն խնդիրներն են՝

1. Բնակչության կրթական և բարոյական դաստիարակությանը պետական մշակութային ծրագրերի իրականացումը,
2. Պետական աջակցություն տրամադրել թանգարաններին և գրադարաններին երաժշտության և թատերական արվեստի կենտոններին մշակութային կյանքի պահպանության, սերունդների դաստիարակության նպատակով իրականացվող միջոցառումների շրջանակներում,
3. ՀՀ-ում պատմական հուշարձանների պահպանության միջոցառումներ իրականացնել,
4. Արտասահմանյան երկրներում հայկական հուշարձանների պահպանության միջոցառումներ ձեռնարկել,
5. Աջակցել մշակութային կյանքի պահպանության համար կազմակերպությունների կողմից ներկայացվող ծրագրերին

#### \* Սոցիալական քաղաքականություն.

Ազատամարտիկների և իրենց ընտանիքների անդամների իրավական և այլ բազմակողմանի աջակցություն: Բնակչության սոցիալական անհավասարության կրճատման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, սոցիալական բարիքների մատչելիության ապահովման համար անհրաժեշտ է մշակել սոցիալական քաղաքականություն:

Ոլորտի հիմնախնդիրները՝



1. Աղքատության բարձր մակարդակ,
2. Ծնելիության և ծերացման անհավասարության արդյունքում ժողովրդագրական անբարենպաստ վիճակ,
3. Սոցիալական ոչ արդյունավետ աջակցության հետևանքները:

Ոլորտի կարգավորման մեր կազմած գործունեության ուղիներն են՝

1. բնակչության դրամական եկամուտների աճի ապահովումը՝ աշխատավարձի չափի մեծացման, կենսաթոշակային ապահովության բարեփոխման և բնակչության թիրախային խմբերի սոցիալական աջակցության բարձրացման միջոցով,
2. առողջապահության, սոցիալական սպասարկման և կրթության մատչելիության ապահովումը,
3. աղքատության հաղթահարումը, բնակչության սոցիալական անվտանգության երաշխավորումը,
4. սոցիալապես խոցելի խավերի պետական աջակցության կարիք ունեցող և սոցիալական խնդիրներն ինքնուրույն լուծելու չկարողացող խմբերի արդյունավետ պաշտպանության իրականացումը,
5. բնակչության սոցիալական պաշտպանության ապահովագրական սկզբունքների կիրառում,
6. երկրի աշխատունակ բնակչության համար տնտեսական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը,
7. զբաղվածության անհրաժեշտ պայմանների ստեղծումը,
8. գյուղական բնկավայրերիի սոցիալական զարգացման միջոցառումների իրականացում,
9. ծնելիության և ծերացման ցուցանիշների բարելավման հավասարակշռամար ևախաղրյալների ստեղծմամբ ժողովրդագրական իրավիճակի բարելավումը,
10. բնակարանային պայմանների ապահովման կամ դրանց բարելավման կարիք ունեցող ընտանիքներին պետության աջակցությունը պարտադիր է: Այստեղ կարևորում ենք՝
11. Երիտասարդ ընտանիքներին բնակարան ձեռք բերելու համար հիփոթեքային վարկերի տրամադրում ցածր տոկոսով թե առաջնային և թե երկրորդային շուկայում իրականացվող ծրագրերի պետական աջակցություն,
12. հիփոթեքային վարկի առավել երկարաճամկետ տրամադրում,
13. Կարիքավոր հատվածի համար բնակարանների տրամադրման ծրագիր ներդնել և իրականացնել. գնահատելով արդյունքները:

Զբաղվածություն

Բնակչության սոցիալական պաշտպանության կարևորագույն խնդիրներից մեկը զբաղվածությունն է: Բնակչության սոցիալական հիմնախնդիրների լուծման անկյունաքարերից է բնակչության զբաղվածության ապահովումը, որ պետք է լինի պետության առանձնահատուկ հոգածության կենտրոնում: Աշխատանքային հարաբերությունների մեջ պետք է լինի ցանկացած չափահաս, գործունակ, նաև սահմանափակ գործունակ անձը՝ իր գիտելիքների, հնարավորությունների և



կարողությունների սահմաններում: Աշխատանքային հարաբերությունների կարգավորման համար աշխատավարձերի խելամիտ չափը, աշխատանքային բարենպաստ պայմանները պետք է լինեն քաղաքացիների բարձր կենսամակարդակի ապահովման մեխանիզմներից մեկը:

Մեր կողմից առանձնացրած խնդիրներն են՝

1. նվազագույն աշխատավարձի բարձրացում գնաճի տեմպերին համապատասխան,
2. Զբաղվածության զարգացման նպատակով իրականացվելիք ծրագրերին պետական ֆինանսավորության չափի մեծացում,
3. Աշխատավարձերի սահմանման հիմնադրույթների կատարելագործում հաշվի առնելով՝ աշխատանքի քանակը, ծավալը, ժամանակը, բարդությունը և որակը:

Ոլորտում մեր գործունեության ուղիները՝

1. Զբաղվածության ծրագրերի մշակումը, իրականացումը և դրանց արդյունավետության գնահատման ներդրումը,
2. Փոքր և միջին բիզնեսի ոլորտում վարկավորման ծավալների ընդլայնում՝ ինքնագրավածության մակարդակի բարձրացման նպատակով,
3. Սոցիալական պաշտպանության կարիք ունեցող քաղաքացիներին աշխատանքի ապահովման ուղղությամբ հասցեական աջակցության ցուցաբերումը,
4. Հաշմանդամություն ունեցող անձանց մասնագիտական ուսուցման, վերապատրաստման և աշխատանքի տեղավորման հարցում աջակցությունը:

Սոցիալական պաշտպանություն

Հիմնախնդիր է ոչ միայն անապահով խավերի սոցիալական պաշտպանության, այլև զբաղվածների գերակշիռ մասի աշխատանքի վարձատրության ցածր մակարդակը: Պետական քաղաքականության հիմնական ուղղությունները սոցիալական պաշտպանության ոլորտում պետք է հանդիսանան՝

1. Քաղաքացիների սոցիալական պաշտպանության հայեցակարգի մշակում,
2. Աղքատության մակարդակի նվազեցում,
3. Հաշմանդամություն ունեցող անձանց, կենսաթոշակառուների, տարեցների, երեխաների և սոցիալական օգնության կարիք ունեցող բնակչության այլ խավերի համար պետական թիրախային ծրագրերի մշակումը և իրականացումը, արդյունքների գնահատում,
4. Նպաստների, կենսաթոշակների, աշխատավարձերի մակարդակների աճը,
5. Նվազագույն սպառողական զամբյուղից ոչ ցածր կենսաթոշակ ստանալու քաղաքացիների իրավունքի ապահովում,
6. կրթաթոշակների բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակում,

Ազգային փոքրամասնություններ

Ազգային փոքրամասնությունները ՀՀ-ի զարգացման համար ունեն կարևորագույն նշանակություն: Չնայած ազգային փոքրամասնությունները կապված նրանց ազգային և կրոնական պատկանելիության հետ չեն առնչվում որևէ խտրականության, այնուամենայն



նրանց ներգրավվածությունը հասարակական-քաղաքական կյանքում թույլ է զարգացած: Հիմնական խնդիրը նրանց ներգրավվածությունն է ու դրան ուղղված միջոցառումների իրականացումը: Այս առումով առանձնացրել ենք հետևյալ գործողությունների պլանը

1. Ազգային փոքրամասնությունների լեզուների պահպանությունը պետք է լինի պետության ուշադրության և հոգածության կետրոնում, որպեսզի և կրթական և կրատական առումով չառնչվեն որևէ խնդրի, ինչպես նաև պահպանեն իրենց էթնիկ լզուն,
2. Նախադպրոցական և դպրոցական կրթության կազմակերպման գործում զարգացնել ուսումնական գործընթացների մեջ ներգրավվածությանն ուղղված քայլերը,
3. Բարձրագույն ուսումնական հաստություններում մտցնել ուսումնական ծրագրեր, որոնք ազգային փոքրամասնությունների լեզուների և մշակութի պահպանությանն ու զարգացմանը կնպաստեն,
4. Նրանց մշակութային կյանքի պահպանման և զարգացման համար տրամադրել միջոցներ պետական բյուջեից, ինչպես նաև ծրագրեր իրականացնել,
5. ԶԼՄ-ներում ազգային փոքրամասնությունների մշակութային կյանքին լուսաբանմանն ուղղված ծրագրերին աջակցություն,
6. Աջակցել նրանց հասարակական-քաղաքական ներգրավվածությանը,
7. Աջակցել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում նրանց ներգրավվածության ապահովմանը,
8. Աջակցել մասնագիտական պատրաստվածության ապահովմանը,
9. Սոցիալական ապահովությանն ուղղված ծրագրերից ազգային փոքրամասնությունների օգտվելուն ուղղված միջոցառումների իրականացում:

#### Առողջապահություն

Առողջապահության համակարգի գործունեության բարելավումը բնակչությանը որակյալ բժշկական ծառայություններ մատուցելը յուրաքանչյուր պետության կարևորագույն նպատակներից մեկն է, քանի որ առողջ բնակչությունը պետության զարգացման երաշխիքն է:

Առողջապահության համակարգի գործունեության ուղիներն են՝

1. մարմինների փոխհամագործակցությունը, որը հնարավորություն կընձեռի կենտրոնական և մարզային մակարդակներում արդյունավետ կառավարման,
2. ֆինանսական միջոցների առավել նպատակային օգտագործումը,
3. հանրային առողջապահության ծառայությունների կատարելագործումը,
4. մասնագիտական որակավորման շարունակական բարձրացման և այլ ուղղություններով կյանքի կոչելու բնակչության առողջությանն առնչվող ռազմավարական ծրագրերի իրականացումը,
5. համակարգի արդիականացմանն ու բնակչության առողջության բարելավմանն ուղղված ծրագրերի իրականացումը,
6. բժշկական սպասարկման մատչելիության ապահովումը,
7. բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց անվճար բժշկական օգնության ցուցաբերումը
8. բնակչության վստահության և գոհունակության բարձրացումը,
9. դեղամիջոցների մատչելիություն:



### Տրանսպորտ

Օդային տրանսպորտ- Այստեղ մի շարք խնդիրներ ենք արձանագրել՝

1. Ուղևորավոխադրման ծախսերի բարձր գները,
2. Ճանապարհային ցանցի սահմանափակվածությունը,
3. Ուղիղ չվերթերի բացարձակ սակավությունը,
4. Թոփչքի անհարմար ժամանակացույցները,
5. Մուտքի և ելքի արտոնագրերի տուրքերը:

### Անհրաժեշտ է որպեսզի

1. Ստեղծվի բաց քաղաքականություն օդային տրանսպորտում,
2. Ավելացնել օդային փոխադրողների որակը,
3. Խրախուսել, արտոնություններ տրամադրել տեղական ավիաընկերությունների, որպեսզի մեծանա այդպիսի ընկերություններ ստեղծելու գրավչությունը,
4. Առողջ մրցակցության վրա հիմնել շուկան,
5. Ավելացնել ցանցը:

### Վերգեսնյա տրանսպորտ

1. Անհարմար ճանապարհներ՝ լի ուղորաններով,
2. Ոչ բարեկարգ ճանապարհներ,
3. Շրջանցող ճանապարհների սակավություն,
4. Երկաթուղային ճանապարհների սակավություն,
5. Քաղաքային և միջքաղաքային հասարակական անմխիթար, չհամակարգված վիճակը,
6. Ոչ ժամանակակի, անսարք, անվտանգության չափանիշներին չհամապատասխող տրանսպորտային միջոցները,
7. Չհամակարգված երթևեկության ընթացքը, ծանրաբեռնվածությունը Երևանում, երթևեկության կանոնների մշտական խախտումները և հնչող ազդանշանները
8. Առավել անվտանգ և էկոլոգիապես մաքուր տրանսպորտը՝ մետրոն, որպես քաղաքային տրանսպորտի ծանրաբեռնվածությունը կրճատող՝ ստեղծման պպահից չի զարգացել Երևանում,
9. Բնությանը հասցված վնասները:

### Անհրաժեշտ է իրականացնել՝

1. Շրջանցող ճանապարհների կառուցում, ուղորանների կրճատում,
2. Ճանապարհների բարեկարգում,
3. Երկաթուղային տրանսպորտի ներպետական և միջազգային ցանցի ընդլայնում,



4. Քաղաքային, միջքաղաքային տրանսպորտային միջոցների փոխարինում նոր տրանսպորտային միջոցներով,

5. Երթևեկության ծանրաբեռնվածության թեթևացման համար ծրագրի մշակում և իրականացում:

#### Քաղաքաշինություն

##### Հիմնախնդիրներ

1. Օրենսդրական դաշտի բացեր,
2. Ինքնակամ շինարարություն, ոլորտի օրենսդրական դաշտի անկատարություն,
3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ոչ հստակություն,
4. Ոչ արդյունավետ վարչարարություն:

##### Անհրաժեշտ է

1. Հստակեցնել օրենսդրական դաշտը,
2. Վերանայել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակը, վերաբաշխել առավել համակարգված ձևով վերջիններիս միջև,
3. Վերահսկող կազմակերպությունների զարգացում:

#### Շրջակա միջավայրի պաշտպանություն

Շրջակա միջավայրի պահպանության օրենսդրությունը կարծես թե չի կիրառվում ՀՀ-ում, ինչի հետևանքով բնության կրած վնասները հանգեցնում են քաղաքացիների անօտարելի իրավունքների ոտնահարմանը: Մարդիկ հնարավորություն չունեն խմելու մաքուր ջուր, շնչելու մաքուր օդ: Այս ամենը հանգեցնում է բնակչության հիվանդությունների աճին և մահացության թվերի բարձրացմանը:

Շրջակա միջավայրի հիմնախնդիրներն են

1. Պետական էկոլոգիական և բնապահպանական կառավարման մարմինների կողմից արդյունավետ կառավարման բացակայություն,
2. Ավտոտրանսպորտային միջոցների շահագործման հետևանքով արտանետած վնասակար նյութերը,
3. Քաղաքներում խիտ շինարարության հետևանքով առաջացած արհեստական փոշին,
4. Կանաչ տարածքների/անտառների ոչնչացումը, ապօրինի ծառահատումը,
5. Անտառային հրդեհները:

Այս խնդիրների լուծման արդյունքը կլինի շրջակա միջավայրի գործոնների հետ կապված հիվանդության և մահացության նվազումը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կյանքի որակի բարձրացումը: Մեր գործունեության ուղիները

1. Մաքրման կայաններ տեղադրող կազմակերպությունների հիմնում և հարկային արտոնությունների տրամադրում,



2. Պետական էկոլոգիական փորձաքննությունների ինստիտուտի վերականգնում,
3. Շրջակա միջավայրի պահպանության նպատակով ձեռք բերվող սարքավորումների համար տուրքերից ազատում,
4. Թափոնների վերամշակման ոլորտի զարգացում,
5. Թափոնների վերամշակմամբ զբաղվող կազմակերպություններին հարկային արտոնությունների տրամադրում,
6. Ապօրինի աղբավայրերի վերացում,
7. Բնապահպանական կրթության զարգացում դպրոցներում,
8. Բնությանն հասցված վնասների համար ուզանքների սահմանաչափերի մեծացում:

### Սփյուռք

Սփյուռքը Հայաստանի տնտեսական, սոցիալական և հոգևոր-մշակութային կյանքի զարգացման գործում իր ուրույն տեղն է զբաղեցնում:

Հայրենիք և սփյուռք հարաբերություններում առանձնահատուկ կարևորությունն ունի տնտեսական ոլորտը:

Կարևորելով սփյուռքի դերը, որպես կամուրջ մեր երկրի զարգացման գործում նախատեսում ենք

1. Վերականգնել Հայաստանի ներդրումային միջավայրի նկատմամբ սփյուռքի վստահությունը, ներդրումների առավել անհրաժեշտ ծավալներ ներգրավվել նպատակային գերակայություններին համապատասխան,
2. Մեծացնել ներդրումային միջավայրը ոչ ռեզիդենտ հայության համար, նոր հնարավորություններ և արտոնություններ, մրցակցային պայմաններ սահմանել ներդրումների համար,
3. Ջարգացնել մտավոր ենթակառուցվածքների ներդրումային միջավայրը, ստեղծել Հայկական կազմակերպությունների մասնաճյուղերը արտասահմանյան ընկերություններում սփյուռքի օգնությամբ
4. Ջարգացնել շուկայական ենթակառուցվածքների ներդրումային միջավայրը,
5. Նպաստել հայության միաբանմանը, փոխգործակցությանն ու հայապահպանությանը,
6. Ջարգացնել առողջապահության ոլորտում նորարարությունների ներգրավմանը,
7. Ջարգացնել գյուղական համայնքների սոցիալ-մշակութային ենթակառուցվածքների վերականգնմանը, ճանապարհաշինությանը և ջրամատակարարմանը, գյուղատնտեսական արտադրությանն ուղղված նախագծերի իրականացմանը և սփյուռքի դրանց մասնակցության խթանմանը,
8. Կրթության, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտների զարգացման ոլորտին մասնակից դարձնել սփյուռքահայությանն ու իրականացնել նորարարություններ ՀՀ-ում:
9. Հայկական արտադրանք թղարկող ընկերությունների գլոբալ ճանաչմանն ու առաջխաղացման ծրագրեր իրականացնել:



### Զբոսաշրջություն

Զբոսաշրջությունը սոցիալ-տնտեսական կարևորագույն նշանակություն ունի երկրի զարգացման համար, այն պետք է դառնա մեր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման առաջատար ուղղություններից մեկը, քանի որ այն կկրճատի գործազրկությունը: Այն երկրի ճանաչելիության բարձրացման, տնտեսական ծառայությունների արտահանման, դրամական հոսքեր ներգրավելու արդյունավետ գործիք է: Հայաստանի բարենպաստ բնակլիմայական պայմանները, հարուստ բնաշխարհը, լեռները, գետերը, բուժիչ աղբյուրները, բուսական աշխարհը, ինչպես նաև հարուստ պատմամշակութային ժառանգությունը այն հիմնաքարերն են, որոնց համաձայն ոլորտի զարգացման բնագավառում ունի հսկայական ռեսուրսներ:

Ոլորտի հիմնախնդիրները՝

1. Էկո և ագրոգրոսաշրջության
2. Տրանսպորտ, օդային ուղևորափոխադրման բարձր գներ,
3. Ուղիղ չվերթների սակավություն,
4. Թոխքի անհարմար ժամանակացույցներ,
5. Զբոսաշրջիկների առողջության և անվտանգության պահպանումը,
6. Շրջակա միջավայրի աղտոտվածությունը,,
7. Զբոսաշրջային ենթակառուցվածքների կենտրոնացում,
8. Ոլորտի ներդրումների պակասը,
9. Քաղաքական, տնտեսական անկայունությունը և տարածաշրջանային լարվածություն,
10. Հասարակական զուգարանների սակավություն,
11. Լեզվական քնդիրներ, ճանապարհային ուղենիշերին՝ այլ լեզուների բացակայություն:

### Նպատակներ՝

1. Կառուցել ոլորանները կրճատող կամուրջներ և շրջանցող ճանապարհներ,
2. Իրանի Իսլամական Հանրապետության հետ երկաթուղային տրանսպորտի կառուցում,
3. Ենթակառուցվածքների պակենտրոնացում,
4. անգլերեն ուղենիշներ ավելացնել ճանապարհներին և հասարակական տրանսպորտի
5. Հայաստանի տրանսպորտային համակարգի և մուտքի ու ելքի ընթացակարգերի բարելավում,
6. գրոսաշրջային ենթակառուցվածքների բարելավում և զարգացում,
7. Զբոսաշրջային կազմակերպությունների գործունեությանը աջակցություն,
8. Ոլորտում մարդկային ռեսուրսների զարգացում, պահանջարկին համապատասխանող մասնագետների պատրաստում և վերապատրաստում,



9. Ոլորտի զարգացման համակարգի կատարելագործում, որպեսզի Հայաստանի քաղաքացիների զբաղվածության ավելանա, պետության և նրա քաղաքացիների եկամուտը աճի, միջազգային կապերի զարգանան, պահպանվեն զբոսաշրջային ռեսուրսները և Հայաստանի պատմամշակութային ժառանգությունը և բնությունը:

#### Ժողովրդավարական ինստիտուտների կայացում

Ժողովրդավարական ինստիտուտների կայացման համար անհրաժեշտություն ենք տեսնում վարքաբանական և արժեքային մակարդակում փոփոխություններին:

Անգամ ներկայիս ժամանակաշրջանում ժողովրդավարական անցումների փորձը ցույց տվեց, որ ժողովրդավարությունը ձևական է հռչակված, ժողովրդավարական ինստիտուտների հաստատումը ոչ ամբողջական է:

Հիմնախնդիրները

1. Քաղաքացական թույլ ներկայացուցչությունը կառավարման գործընթացներին,
2. Քաղաքական գործընթացներին բացի ընտրական քվեարկությունից, այլ ձևաչափով մասնակցության բացակայություն,
3. Քաղաքական մասնակցության ցածր մակարդակը,
4. Պետության պաշտոնատար անձանց կողմից օրենքների հաճախակի խախտումները,
5. Ընտրությունների կասկածելի լեգիտիմությունը,
6. Պետական ինստիտուտների նկատմամբ հասարակության վստահության լրիվ բացակայությունը,
7. Պետության կայուն ցածր ինստիտուցիոնալ արդյունավետությունը:

Նշված խնդիրների համար անհրաժեշտ է՝

1. Ժողովրդավարական համախըմբում,
2. Քաղաքական ուժերի միջև համակարտությունների բացառում, լեգիտիմ համաձայնագրերի շարքի սահմանում,
3. Ընտրական գործընթացներին քաղաքացիական վերահսկողության մակարդակի բարձրացում,
4. Հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ քաղաքացիական նախաձեռնություններին ուղղված ծրագրերի անցկացում,
5. Իրավագիտակցության մակարդակի բարձրացում:

#### Տեղեկատվական անվտանգություն

Տեղեկատվական անվտանգությունը մեր երկրում մարդու և պետության շահերի պաշտպանությունն է այնպիսի բացասական ազդեցություններից, որոնք խախտում են մարդու և պետության տեղեկատվության ամբողջականությունը, հասանելիությունը, գաղտնիությունը:

Պատերազմական շրջանում մեր պետությունը բախվեց այնպիսի տեղեկատվական հակամարտության և ագրեսիայի, ինչպիսին են պետական կառույցների կայքերի, էթնիկ հայերի սոցիալական ցանցերի դեմ ուղղված:



### Հիմնախնդիրներ՝

1. քարոզչական և հակաքարոզչական ազդեցության մեխանիզմները
2. զանգվածային լրագրության,
3. տեղեկատվական հոսքերի հետ կապված խնդիրների,
4. միջնակարգ, բարձրագույն կրթության բացը տվյալ ոլորտում,
5. Քաղաքացիական իրազեկման կենտրոնների, մարմինների բացակայությունը,
6. Հանրային իրազեկման և անվտանգության կենտրոնների բացակայություն,

### Իրականացվող գործողություններ՝

1. Փորձագիտական վերլուծության ենթարկել ոլորտը,
2. Փորձի փոխանակում ոլորտում առաջատար պետությունների հետ,
3. Ներքին քարոզչական և հակաքարոզչական կազմակերպությունների վերահսկողություն, աշխատանքների համակարգում,
4. Տեղեկատվական մարմինների կատարելագործում,
5. Տեղեկատվական անվտանգ միջոցների զարգացում,
6. Ապակառուցողական արտասահմանյան հոսքերից անվտանգության ապահովում,
7. Կիրենոանվտանգության զարգացում:

### Առաջատար տեխնոլոգիաներ

Այս ոլորտում հիմնական ներդրումը կրթության և գիտության մեջ է պահանջվում: Մեր հայրենակիցների բարձր մտավոր ներուժը կարող է խթան հանդիսանալ ոլորտի զարգացման և բարձր մակարդակի ապահովման մեջ, ինչը տարածաշրջանում կստեղծի ոչ միայն առաջատար, այլ նաև հզոր դիրքեր:

1. Զարգացնել տեխնիկական կրթությունը,
2. Պատրաստել տեխնիկական կրթությամբ մասնագիտական աշխատուժ,
3. Տեխնոլոգիական կրթության խթանումը Հայաստանում,
4. Ներգրավվել ներդրումներ,
5. Ծառայությունների արտահանման ուղիներ գծել,
6. Ներկայացնել համակարգված կրթական ծրագիր, պարտադիր դարձնելով առաջատար տեխնոլոգիական կրթությունը ՀՀ-ում,
7. Կադրերի պատրաստման և վերապատրաստման առնչվող խնդիրները,
8. Ենթակառուցվածքների ոչ բավարար լինելը,
9. Տարածաշրջանում երկրի զարգացումանն ուղղված միջոցառումների շարունակական իրականացում,
10. Ձեռնարկատիրական մշակույթի սերմանում,
11. Հավելյալ տնտեսական ակտիվության ստեղծում,
12. Նոր որակի առաջնորդների և ձեռներեցների պատրաստում:

### Ռոբոտաշինություն



Այս ոլորտում մենք կարող ենք մեր դիրքերը ամրապնդել և առաջ տանել շնորհիվ մեր հզոր մարդկային կապիտալի ներուժի: Վերիջին պատերազմը մեզ ապացուցեց, որ տվյալ ոլորտի զարգացումը գերակայություն է և ամեն ինչ անհրաժեշտ է անել որպեսզի ոլորտը զարգանա:

#### Անհրաժեշտ է

1. Ինժեներա-ճարտարապետական կրթության զարգացում,
2. Միջնակարգ կրթության ծրագրերում ինժեներա-ճարտարապետական առարկայի պարտադիր ներդրում,
3. Որակյալ կադրերի պատրաստում, վերապատրաստում,
4. Արտասահմանյան առաջատար ընկերությունների հետ համագործակցություն, փորձի փոխանակում,
5. Կրթաթոշակներ տրամադրող ծրագրերի մշակում և իրականացում,
6. երկրում տեխնոլոգիական կազմակերպությունների ցանցի զարգացում,
7. Ռազմական ոլորտի զարգացում,
8. Բաց ներդրումային դաշտ սահմանել ոլորտի զարգացման համար:

#### Սպորտ

Հասարակության առողջության բարձր մակարդակը ապահովելու, աշխատունակության և գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացմանը նպաստելու, ինչպես նաև բնակչության երկարակեցության ապահովման, դրա հիման վրա աշխատունակության տարիքի երկարացնելու նպատակով կարևորում ենք սպորտի զարգացումը և դրան ուղղված ծրագրերի իրականացումը ՀՀ-ում:

#### Մեր նպատակները

1. Մանկապարտեզներում, դպրոցներում, բուհերում ֆիզիկական դաստիարակության խորացում, զարգացում,
2. Սպորտային վարպետության աճի և զարգացման գրանցում,
3. Բարձր նվաճումների գրանցում միջազգային մրցույթներում,
4. Գործատուներին խրախուսում, ովքեր իրենց աշխատակիցների առողջ ապրելակերպն ապահովելու համար կստեղծեն սպորտով զբաղվելու նպաստավոր պայմաններ, երաշխիքներ՝ մարզասրահներ հաճախելու արժեքներ տրամադրելու, սպորտային կորպորատիվ միջոցառումների կազմակերպելու ձևով և այլն,
5. Պետական սուբսիդիաների տրամադրում համայնքային կամ մարզային կառավարման մարմիններին, որոն կներկայացնեն սպորտի զարգացմանն ուղղված ծրագրեր,
6. ՀՀ քաղաքային և գյուղական համայնքներում սպորտային հրապարակների կառուցում, զանգվածային սպորտի մեկնարկում,
7. Մտավոր աշխատունակության, ուշադրության, օպերատիվ մտածողության զարգացում: